



Կարգապահական գործ թիվ ԿԳ-16023

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի մարտի 03-ի թիվ 63-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/53-Ա

ՓԱՍՏԱՐԱՆ ՆԱՌԱ ԿԱԿՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի, Լուսինե Սահակյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Երվանդ Վարոսյանի քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Նառա Կակոյանին (արտոնագիր թիվ 449) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 03.03.2016թ. տրամադրված տեղեկանքի փաստաբան Նառա Կակոյաննունի 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. հուլիս ամսից 2015թ. դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

01.02.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի թիվ 37-Ա/ԿԳ-16023 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Նառա Կակոյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

05.02.2016թ-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդի անդամ Կարապետ Աղաջանյանին (նիստը նախագահող):

09.02.2016թ-ին գործը ընդունվել է վարույթ և նիստի օր է նշանակվել 03.03.2016թ-ին, ժամը 20:12-ին:

3. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Փաստաբան Նառա Կակոյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդին անհայտ պատճառներով նիստին չէր ներկայացել:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Նառա Կակոյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 24.06.2005թ. (հաստատվում է Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 03.03.2016թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Նառա Կակոյանը ունի 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. հուլիս ամսից 2015թ. դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 03.03.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Նառա Կակոյանը իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 03.03.2016թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 03.03.2016թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Նառա Կակոյանի (արտոնագիր 449, ստացված՝ 24.06.2005թ.) նկատմամբ 2006-2016թթ. ընկած ժամանակահատվածում 6 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ անդամավճարի պարտք ունենալու մասով, որը Պալատի Խորհրդի 28.12.2006թ. թիվ 22/07 և 27.12.2010թ. թիվ 33/4 որոշմամբ կարճվել է (կիրառվել է արտոնություն): 09.11.2010թ թիվ 30/5 որոշման անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է պատասխանատվության նկատողության, 09.08.2011թ 16/3 որոշմամբ խիստ նկատողության, 28.09.2015թ ԿԳ/114-Ա որոշմամբ նկատողության և 16.10 2015թ-ին թիվ ԿԳ/149-Ա որոշմամբ կրկին խիստ նկատողության :

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Նառա Կակոյանը պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Վերոնշյալ ձևերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Նառա Կակոյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 03.03.2016թ. տրամադրված տեղեկանքներով: Ավելին, կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ Նառա Կակոյանը շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը խորհրդում լսվելու ժամանակ էլ վերը նշված խախտումն առկա էր:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Նառա Կակոյանին (արտոնագիր թիվ 449) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Նառա Կակոյանի (արտոնագիր թիվ 449) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 10.000 ՀՀ դրամի չափով :

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Նառա Կակոյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարապետ Աղաջանյան